ՅԵ.

Մխիթարեան նամակագիրը կը սրբագրէ Ֆրանսայի Գաբրիէլ անուն վեղարաւորին պատրաստած Լատին–Հայ բառարանի մը ընծայական թուղթը, որ պիտի մատուցուի Ֆրանսայի թագաւորին։

Ամենապատիւ տեառն տեառն Աբրահոմ վերոյ իսնարհական ողջոյն

1772 փետր. 6

... Փատրի ոմն ի գաբուջինաց Գաբրիէլ անուն, ուսեալ զլեզուն հայոց, արարեալ էր զբառարան ի լատին լեզուէ ի հայ բարբառ իբրև զվիլոթն. և հանդերձեալ էր երթալ ի գաղ'ղ'իա, և հրամանաւ արքային տպագրել զայն. զթուղթն ընծայութեան բառարանին առ թագաւորն գաղ'ղ'իացւոց, որպէս օրէն է առնել և տպագրել ի ճակատս գրոց, ետ ցիս և խնդրեաց յինէն սրբագրել զայն ըստ մերում ոճոյ. և ես սրբագրեալ զայն ըստ կարի իմում, իբրև ետու նմա, նա այնչափ հաւանեցաւ ընդ այն, մինչև ոչ յագէր յընթեռնլոյ զայն. և աննախանձ յերեսս իմ առաջի այլոց գովէր և համբաւէր. և ասէր. տեսանէ՞ք զայս կարգաւոր, գերագոյն քան զիս է յարհեստս ճարտասանութեան. և ես կամաւ զայն այնպէս սրբագրեցի, զի նա զայն յառաջագոյն քան զիս այլոց հայոց տուեալ էր սրբագրել, և նոքա հրաժարեալ էին. և ասացեալ. զայդ գործ կարող են առնել միայն կարգաւորքն վենէտիկեան սուրբ ղազարու մենաստանին։...

Նուաստ ծառայ
Հայր Դանիէլ վրդպ.

ՅԶ.

Պասրայի կառավարութիւնը Հրէից ձեռքն ըլլալուն հաւաստիքներ և ծանօթութիւններ նշանակուած են։

Գերյարգելի աբբահոր իմում տեառն տեառն Ստեփաննոս բարոնեանցի համբուրիւ աջոյն ողջոյն ի Քրիստոս

... Տէր գրիգորն բազում ուրախութեամբ և յաւէտ բազում աւետեաք յորդորէ զիս ընդ իւր միաբանիլ յայն խորհուրդ՝ զոր ի ծերութեան իւրում ենթադրէ։ Ի Թիֆլիզ ասէ կայ եկեղեցի մի փատրոց, և այժմ այն եկեղեցի ոչ է ի ձեռս նոցա, այլ կամ դատարկ է, և կամ ի ձեռս յունաց, զի հերակլն բարկացեալ ի վերայ փատրոց՝ արտաքսեալ է զնոսա ի Թիֆլիզու. և թէպէտ յետոյ կոչեալ է զնոսա յետս, բայց զեկեղեցին ոչ է տուեալ ի ձեռս նոցա։ Արդ ասէ ես ունիմ ի Թիֆլիզ մեծ բարեկամ զյոյն մի ուղղափառ՝ որ այժմ է տիվանպէյի, և սիրելի յաչս հերակլի։ Եւ այժմ գրեցի (ասէ) ևն, զի եթէ զայն եկեղեցի մեզ տայցէ՝ գնամ անդ և բազում հոգևոր շահ ընծայի ժողովրդեան...։

Կարծեմ թէ ի վերայ իշխանութեան հրէից ասա եղելոց ինչ ոչ եմ գրեալ Գերյարգութեանդ. ուստի քանի ինչ ի վերայ այնր ևս գրեցից։ Տէրութիւն և իշխանութիւն քաղաքիս ընդ կառավարութեան է ի ձեռս հրէից, մանաւանդ ի ձեռս գլխոյ նոցա՝ որ ասի եաղուպ։ Եւ թէ որչափ է իշխանութիւն սորա կարէք իմանալ ի հնգից. նախ՝ զի յորժամ միասէլլիմն քաղաքիս իշխանութիւն առեալ ի փաշայէն պաղտատայ եկն ասա,